ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-020-10.09.2021,22.10.2021-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զանգվածային լրատվության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-14-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում.

1) լրացնել նոր 5-րդ կետով հետևյալ խմբագրությամբ.

«5) չնույնականացվող աղբյուր՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ (այսուհետ՝ աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, ապա նաև պետական հաշվառման համարը, իսկ եթե աղբյուրը տնօրինվում է իրավաբանական անձի կողմից՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը»:

2) 2-րդ կետի 4-րդ ենթակետում «1-ին և 2-րդ կետերում» բառերը փոխարինել «4-րդ մասում» բառերով, «սեփական կամ վարձակալած» բառերը փոխարինել «գրանցված» բառով, իսկ «տեղեկությունները» բառը փոխարինել «տվյալները» բառով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի

1-ին մասը լրացնել՝ նոր 2-րդ պարբերությամբ՝

«Լրատվական գործունեություն իրականացնողի լրագրողի հավատարմագրումը պետական մարմիններում ենթակա է մերժման, եթե լրատվական գործունեություն իրականացնողը չի կատարել սույն օրենքի 11-րդ հոդվածով կամ 12-րդ հոդվածի 2-րդ

մասով նախատեսված պահանջները: Լրագրողի հավատարմագրման մերժման և դադարեցման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատասխան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում՝

1) «ելույթի» բառից հետո լրացնել «հրապարակման,» բառով.
2) լրացնել 2-րդ նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածում՝
1) վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 11. Զանգվածային լրատվության միջոցի տվյալները ներկայացնելը**»:

2) Լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.
«4. Համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցն իր կայքում պետք է ներառի՝

1) լրատվության միջոցի անվանումը.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաև պետական հաշվառման համարը»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Զանգվածային լրատվության միջոցի եկամուտները գոյանում են գովազդից, այլ վճարովի եթերաժամից, սեփական արտադրության տպագիր պարբերականի, տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից, բաժանորդային մուծումներից, հիմնադիրների ներդրումներից, հովանավորների կողմից հատկացվաշ գումարներից կամ նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներից:

2. Լրատվական գործունեություն իրականացնողը, մինչև ընթացիկ տարվա մարտի 31-ը ներառյալ, պարտավոր է նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի հերթական թողարկման մեջ (եթե դա թողարկվում է), իսկ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայքի գլխավոր էջում «Տարեկան հաշվետվություն» վերնագրի ներքո հրապարակել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ սույն հոդվածի 1-ին մասում նշված եկամուտների աղբյուրների:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 1. «Զանգվածային լրատվության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-14-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում.

1) լրացնել նոր 5-րդ կետով հետևյալ խմբագրությամբ.

«5) չնույնականացվող աղբյուր՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ (այսուհետ՝ աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման ~~վայրը~~հասցեն, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, ապա նաև պետական հաշվառման համարը, իսկ եթե աղբյուրը տնօրինվում է իրավաբանական անձի կողմից՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը»:

2) 2-րդ կետի 4-րդ ենթակետում «1-ին և 2-րդ կետերում» բառերը փոխարինել «4-րդ մասում» բառերով, «սեփական կամ վարձակալած» բառերը փոխարինել «գրանցված» բառով, իսկ «տեղեկությունները» բառը փոխարինել «տվյալները» բառով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի

1-ին մասը լրացնել՝ նոր 2-րդ պարբերությամբ՝

«Լրատվական գործունեություն իրականացնողի լրագրողի հավատարմագրումը պետական մարմիններում ենթակա է մերժման, եթե ~~այն~~ լրատվական գործունեություն իրականացնողը չի կատարել սույն օրենքի 11-րդ հոդվածով կամ 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջները: Լրագրողի հավատարմագրման մերժման և դադարեցման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատասխան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում՝

1) «ելույթի» բառից հետո լրացնել «~~,~~ հրապարակման,» բառով.
2) լրացնել 2-րդ նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ.

«**Հոդված 11. Զանգվածային լրատվության միջոցի տվյալները ներկայացնելը**»:

2) Լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ.

«4. Համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցն իր կայքում պետք է ներառի՝

1) լրատվության միջոցի անվանումը.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաև պետական հաշվառման համարը»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Զանգվածային լրատվության միջոցի եկամուտները գոյանում են գովազդից, այլ վճարովի եթերաժամից, սեփական արտադրության տպագիր պարբերականի, տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից, բաժանորդային մուծումներից, հիմնադիրների ներդրումներից, հովանավորների կողմից հատկացված գումարներից կամ նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներից:

2. Լրատվական գործունեություն իրականացնողը, մինչև ընթացիկ տարվա մարտի 31-ը ներառյալ, պարտավոր է նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի հերթական թողարկման մեջ (եթե դա թողարկվում է), իսկ համացանցում գրանցված

դոմեյն, հոսթինգ ունեցող կայքի գլխավոր էջում «Տարեկան հաշվետվություն» վերնագրի ներքո հրապարակել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ սույն հոդվածի 1-ին մասում նշված եկամուտների աղբյուրների:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-020-10.09.2021-ԳԿ-011/0), ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-020[1]-10.09.2021-ԳԿ-011/0) ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-020[2]-10.09.2021-ԳԿ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության (լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը փոփոխությունը (լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին	Նախագծի 1-ին հոդվածի «հաշվառման» բառից հետո «վայրը» բառը փոխարինել «հասցեն» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված			
2	Հեղինակ, «Հայաստան» խմբակցություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված	ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածից հանել «Մերժման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատասխան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով» նախադասությունը:	Չի ընդունվել	Չի ընդունվել
3	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված	ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածից «ենթակա է մերժման, եթե» բառերից հետո «այն» բառը փոխարինել «լրատվական գործունեություն իրականացնողը»:	Ընդունվել է	Ընդունվել է
4	Հեղինակ, «Հայաստան» խմբակցություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված	ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «պահանջները:» բառից հետո լրացնել «Լրագրողի հավատարմագրման», իսկ «մերժման» բառից հետո «և դադարեցման» բառերով:	Չի ընդունվել	Չի ընդունվել

5	Հեղինակ, «Հայաստան» խմբակցություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 3-րդ հոդված	ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածից հանել 2-րդ մասում՝ «հանգամանքից» բառից հետո ավելացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ լրատվական գործունեություն իրականացնողը ձեռնարկել է հնարավոր միջոցներ չնույնականացվող աղբյուրի նույնականացման համար»:	Չի ընդունվել	Չի ընդունվել
6	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի «Հրապարակային ելույթի» բառերը փոխարինել «Ելույթի» բառով, իսկ «կամ գրառման» բառը «հրապարկման» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
7	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է

8	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում մասում «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
9	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում «հիմնադիրների ներդրումներից» բառերից հետո լրացնել «, հովանավորների կողմից հատկացվաշ գումարներից կամ նվիրատվություններից» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
10	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի վեռնագիրը	Նախագծի վեռնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Զանգվածային լրատվության միջոցի ֆինանսական հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետներում չհրապարակելը կամ պարտադիր օրինակները չուղարկելը կամ	Ընդունվել է	Ընդունվել է

			թողարկման տվյալները չներառելը»:		
11	Հեղինակ, «Հայաստան» խմբակցություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մասում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը փոխարինել «քսանապատիկից քառասունապատիկի» բառերով:	Չի ընդունվել	Չի ընդունվել
12	Հեղինակ, «Հայաստան» խմբակցություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ մասում «երեքհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի» բառերը փոխարինել «երեսնապատիկից վաթսունապատիկի» բառերով:	Չի ընդունվել	Չի ընդունվել

13	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել հետևյալ կերպ 1-ին մասի «189-րդ» բառը փոփոխել «հոդվածով, 189-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով»: բառերով, իսկ «հոդվածներով» բառը փոխարինել «հոդվածով» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
14	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել հետևյալ կերպ «2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն՝ 1) Հայաստանի	Ընդունվել է	Ընդունվել է

			Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետը՝ սույն օրենսգրքի 169.29-րդ հոդվածով և 189-րդ հոդվածի 3-6-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով. 2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների գործակալության պետը՝ սույն օրենսգրքի 189.17-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների		

			վերաբերյալ գործերով։»։		
15	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը սահմանել հետևյալ կերպ Օրենսգրքի 244² հոդվածի « և 182.6-րդ հոդվածներով» բառերիցը փոխարինել «189.6-րդ հոդվածով և 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է